

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՆԳԱԾ  
ՀՐԱԲՈՒԽՆԵՐ

**Արթուր Սարգսյան  
Չանգած հրաբուխներ**

Արթուր Սարգսյան © 2010

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Նախաբան</i> . . . . .	5
<b>Գլուխ 1</b> Հանգած հրաբուխներ . . . . .	7
<b>Գլուխ 2</b> Մի՛ փնտրիր ուղղակի ելք քո իրավիճակից, այլ քայլիր դեպի հաղթանակ . . . . .	12
<b>Գլուխ 3</b> Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո երազանքներից ավելի . . . . .	18
<b>Գլուխ 4</b> Աստված ունի իր երազանքները քո համար - - - - -	25



## ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքույկում ես խոսում եմ քրիստոնեական կյանքի և ծառայության մի շրջանի մասին, երբ մարդն աննկատ կերպով անկում է ունենում: Եթե դու հայտնվել ես նման իրավիճակում, ես ցանկանում եմ քաջալերել քեզ, որ Հիսուսը նույն է՝ երեկ, այսօր և հավիտյան՝ ընկածին ոտքի կանգնեցնելու և բժշկելու համար: Նա կարող է օգնել քեզ, որպեսզի հաղթահարես այդ իրավիճակը և վերականգնելով քո դիրքը՝ առաջ շարժվես:

Աստվածաշնչում գրված է, որ սատանան գող է: Հովհաննեսի 10.10-14-ում Հիսուսն ասում է. *«Գողը գալիս է, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի. ես եկա, որ կյանք ունենան և էլ ավելի ունենան»*: Սատանան գալիս է, որպեսզի գողանա մեր հավատքը, տեսիլքը, կոչումը, փչացնի և կործանի մեր երազանքներն ու կյանքը, բայց Հիսուսը եկավ, որպեսզի վերականգնի ամեն բան: Նա ճանաչում ու սիրում է մեզ, տալիս է կյանք և ավելին: Նա է բարի Հովիվը, ով թողնելով իննսունհինին՝ գալիս է մեկի կորած

կյանքը փրկելու: Եվ այսօր Նա իննսուներեքին  
թողնելով՝ եկել է փոխելու քո կյանքը:

«Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսուն հաստա-  
տողը և մեզ օժողը Աստված է»:

*Բ Կորնթացիների 1.21*

«Նա ուղարկում է Իր Խոսքը և հալում  
նրանց. Իր քամին փչել է տալիս, և ջրեր են  
վազում»:

*Սաղմոս 147.18*

Երբ Սուրբ Հոգու քամին փչում է մեր կյանքի  
մեջ, այնժամ կյանքի ջրի գետերը բխում են:  
Պենտեկոստեի օրը, երբ քամին փչեց, գետերը  
հորդեցին:

Դու ընտրված և օծված ես: Թո՛ղ Սուրբ Հոգու  
քամին փչի քո կյանքի մեջ, և կյանքի ջրի գե-  
տերը հորդեն:

Աղոթում եմ և հուսով եմ, որ այս գրքույկը  
կօգնի քեզ պարզաբանելու քո կյանքի իրավի-  
ճակներն ու երևույթները, և քո կյանքի հան-  
գած հրաբուխները կրկին կվերածվեն գործող  
հրաբուխների և կրկին կժայթքեն:

Քրիստոսով քո եղբայր՝  
*Արթուր Սարգսյան*

# ԳԼՈՒԽ 1

## Հանգած հրաբուխներ

### «Հանգած հրաբուխները» տարված են փուչ երազանքներով

Սիրելի՛ քրիստոնյա, եթե դու կորցրել ես Աստծո հետ շփումը, Նրա ներկայությունն ու հայտնության խոսքը, կցանկանայի օգնել քեզ, որպեսզի այդ ամենը վերագտնես:

Նախ՝ կուզեի պարզաբանել, թե ինչ նկատի ունեն՝ «հանգած հրաբուխ» ասելով:

Երբ մենք ունենում ենք Սուրբ Հոգու լեցունություն, Աստված օգտագործում է մեզ, և մենք հաջողություններ ենք ունենում, դառնում արգասաբեր և շատ պտուղ բերում՝ քայլելով զորության և հրաշքների մեջ: Մենք ունենում ենք հայտնության խոսքի առատություն և դառնում անոթներ, որոնց միջոցով դրսևորվում է Տիրոջ անսահման փառքը և զորությունը: Իսկ երբ այդ ամենը գնալով սկսում է սառչել և

մարել, ես այդ վիճակը նմանեցնում եմ հանգած հրաբխի:

Շատ «հանգած հրաբուխներ», երազանքներով տարված, սպասում են, որ հանկարծ աստվածային զորությունն ու օծությունը կգա իրենց վրա և կդառնան արթնության «սուպեր» առաքյալներ, բայց երազելուց բացի ուրիշ ոչինչ չեն անում: Աստծո Խոսքն ասում է. «...որջ շունը լավ է մեռած առյուծից» (Ժող. 9.4):

Շատերս ունենալով Աստծո հետ հանդիպման փորձառությունը, վայելելով Նրա հրաշալի քաղցրությունն ու սիրո բերկրանքը՝ ունենում ենք նաև ինչ-որ նպատակներ, ցանկություններ և երազանքներ: Եվ հաճախ մեզ թվում է, թե այդ երազանքները ծնվել են Աստծո հետ հանդիպման արդյունքում: Սակայն պետք է զանազանենք՝ Աստծո քաղցրությունը, որը զգում ենք տվյալ պահին, մեր երազանքներն ու տեսիլքները քաջալերելու համար՞ է, թե՞ ուղղակի մեր հանդեպ Նրա սիրո դրսևորումն ու արտահայտումն է:

Շատ քրիստոնյաներ հրաբուխների նման հանգչում են՝ չցանկանալով թողնել հինը: Նրանք իրենց ստահող փորձառության վրա հենվելով՝ շարունակ պնդում են իրենց իսկ

երազանքները, որոնք շատ անգամ ուղղակի իրենց երևակայության արդյունքն են: Նրանք ցանկանում են իրենց ընթրնած և պատկերացրած ճանապարհներով հասնել և իրագործել դրանք՝ իրենց իսկ փառքի համար:

Նադաբն ու Աբիուդը օտար կրակ մատուցեցին Տիրոջը, և Տիրոջ կրակը սպառեց նրանց (տե՛ս Ղևտ. 10.1): Նրանք զոհաբերության կրակը պետք է վերցնեին սրբարանում վառվող կրակից, որը միշտ բոցավառվում էր, սակայն դրսից օտար կրակ բերեցին: Մեր հոգևոր կյանքում և ծառայության մեջ Տիրոջը պաշտելու և ծառայելու համար չպետք է լինեն այլ շարժառիթներ. այդ ցանկությունը, ոգեշնչվածությունն ու եռանդը պետք է սկիզբ առնեն սրբարանից՝ Տիրոջ հետ հանդիպումից: Հիսուսը Պետրոսին ասաց. *«Սիրո՞ւմ ես Ինձ... արածեցրո՛ւ Իմ գառները»* (Հովհ. 21.17):

Պողոսը Դամասկոս գնալու ճանապարհին հանդիպելով Հիսուսին՝ այնպիսի վերապրում ունեցավ, որ միանգամից ասաց. *«Տեր, ի՞նչ ես կամենում, որ անեմ»* (Գործք. 9.7): Այո՛, հենց այդպես էլ պետք է լինի, Հիսուսի հետ ունեցած հանդիպման վերապրումով մենք պետք է ծառայենք և երկրպագենք Նրան: Աստվածաշնչում նման դեպքեր շատ կան. Մովսեսը վառվող մո-

րենու մոտ հանդիպեց Տիրոջը, որից հետո միայն Իսրայելի ժողովրդին առաջնորդեց և դուրս բերեց Եգիպտոսից, Չեսուն Տիրոջ հրեշտակի հետ հանդիպելուց հետո գրավեց Երիքովը, իսկ Գեդեոնը՝ հաղթեց մադիամացիների ողջ բանակին: Մարդիկ իրենց կյանքում խորապես զգալով Աստծո ներկայությունն ու ազդեցությունը՝ ընդունակ են դառնում ուժեղ ազդեցություն թողնելու իրենց շրջապատի վրա:

Թույլ մի՛ տուր, որ անցյալի անհաջողությունները խոսեն քո գալիք կյանքի մասին:

«Կարելի՞ է, որ Նազարեթից մի լավ բան լինի...»:

*Չովհաննեսի 1.46*

Ոչ ոք չէր կարող հավատալ կամ սպասել, որ Նազարեթից մի բարի բան դուրս կգա: Բայց Չիսուսը՝ Աստծո Որդին, աշխարհի Լույսն ու Փրկիչը, եկավ Նազարեթից: Միգուցե քո հանդեպ մարդկանց կարծիքները, սպասումները և վերաբերմունքը հենց այսպիսին են: Գուցե դու ինքդ էլ հիասթափված ես քեզանից և մտածում ես, որ այլևս ոչինչ չի ստացվի քեզ մոտ, բայց Աստված քո մասին այդ կարծիքին չէ: Ես ուզում եմ հստակ ասել քեզ, որ Աստված ամեն-

նակարող է: Նա կարող է փոխել քո կյանքը և քեզ դարձնել հաջողակ ու պատվական անոթ իր համար:

Գրված է.

«Աստծո առաջին ոչ մի բան անկարելի չէ»:  
*Ղուկասի 1.37*

«Չզորը մեծամեծ բաներ արեց ինձ, և սուրբ է Նրա անունը»:

*Ղուկասի 1.49*

«Մեր Աստծո գթած ողորմության համար, որով ծագող արեգակը վերևից այցելեց մեզ, որ լույս տա խավարում և մահի ստվերներում նստողներին, որ մեր ոտքերը դեպի խաղաղության ճանապարհն ուղղի»:

*Ղուկասի 1.78,79*

## ԳԼՈՒԽ 2

### Մի՛ փնտրիր ուղղակի Ելք քո իրավիճակից, այլ քայլի՛ր դեպի հաղթանակը

#### *Մենք զորավոր ենք Քրիստոսի մեջ*

Ես լիովին համոզված եմ, որ մեր հոգևոր վիճակը բնականոն և նորմալ է այն ժամանակ, երբ մենք Աստծո խոսքի և օծության մեջ ենք, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի մեջ. Նա է մեր հոգևոր «Քանանը», մեր «Եդեմական պարտեզը»: Մենք Նրանով ենք առաջնորդվում և քայլում, որովհետև գրված է. «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Քրիստոսում լինողների համար...» (Հռոմ. 8.1): Եկե՛ք դիտարկենք մի քանի օրինակներ, որոնք կօգնեն մեզ պելլի լավ պատկերացնել և հասկանալ այս խոսքը: Մենք զորավոր ենք միայն Քրիստոսի մեջ, ինչպես առյուծը, որի բնակության վայրը ոչ թե եր-

կինքն է, ծովը կամ օվկիանոսը, այլ ցամաքը: Նա կենդանիների թագավորն է, դաշտի և անտառի գազաններից ամենագորավորը: Եթե փորձենք առյուծին զցել ծովի կամ օվկիանոսի մեջ կամ ինքնաթիռից բաց թողնել, արդյո՞ք օդում կամ ջրում նա կլինի նույնքան ուժեղ, կարող և համարձակ, ինչպես ցամաքում: Վստահ եմ, որ ո՛չ: Օդում, անշուշտ, արծիվներն ավելի ուժեղ են, կարող ու համարձակ, քան առյուծը: Եթե առյուծն օդում մենամարտի բռնվի արծվի հետ, վստահ եմ, որ արծիվը կհաղթի: Նմանապես, արծիվը չի կարող զորավոր և հաղթող լինել ջրում, ինչպես շնածուկը, որը թե՛ արծվին, թե՛ առյուծին կհոշոտի ջրում:

Մենք զորավոր ենք միայն Քրիստոսի մեջ: Երբ քրիստոնյան ապրում է ոչ թե Քրիստոսի, այլ մեղքերի մեջ, նա թույլ, պարտված, անկարող մեկն է, ինչպես առյուծը ջրում կամ օդում, որտեղ նրան հեշտությամբ կարող են հոշոտել շնածկները կամ կտցահարել արծիվները: Քրիստոսի մեջ ապրել՝ նշանակում է ապրել արդարության, սրբության, հավատքի և Սուրբ Հոգու զորության մեջ: Այլ դեպքում մենք հայտնվում ենք անկարող, թույլ, հիմար ու խայտառակված վիճակում: Հիսուսն ասաց.

*«Դուք երկրի աղն եք. եթե աղն անհամանա... այլևս ոչնչի պետք չէ, միայն թե դուրս գցվի և մարդկանցից ոտնակոխ լինի»* (Մատթ. 5.13): Զիշե՞ք Սամսոնին. նա Տիրոջ օծյալն էր, և թշնամին սարսափում էր նրանից: Բայց երբ մեղք գործեց, թշնամին նրան կապեց, աչքերը հանեց և ծաղրեց: Սամսոնը հզոր էր օծության, արդարության և իր կոչման մեջ. մեղավոր կյանքը նրա համար չէր: Սակայն, ինչպես գիտեք, մեղքն ավիրեց և կործանեց նրա կյանքը:

Զիսուսն ասաց. *«Գողը գալիս է, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի: Ես եկա, որ կյանք ունենան և էլ ավելին ունենան»:*

Ե՛կ լինենք ուժեղ, չտրվենք մեղքին ու չհանձնվենք, մնա՛նք Զիսուս Քրիստոսի մեջ: Մնալով մեր կոչման մեջ՝ կլինենք հաղթող, զորավոր, հաջողակ և պտղաբեր: Ոչ միայն մենք կլինենք օրհնված, այլ նաև օրհնություն կլինենք շատերի համար:

## **Ուժեղները կառնեն արքայությունը**

Ուժեղները թեև պարտություններ են ունենում, բայց երբեք չեն հանձնվում: Ուժեղ լինելու համար պետք չէ հետ նայել, այլ պետք է

շարժվել առաջ, ինչպես Պողոս առաքյալն էր ասում. «...ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջին լինողներն են շարժվում» (Փիլիպ. 3.13):

Հիշելով մեր անցյալի անհաջողություններն ու պարտությունները՝ չենք կարող շարժվել առաջ: Քանի դեռ ապրում ենք անցյալի հուշերով ու զգացմունքներով և թույլ ենք տալիս, որ անցյալն իր ազդեցությունը թողնի մեր կյանքի վրա, անհնաստ է հուսալ, որ կունենանք հաղթանակներ և առաջընթացներ:

Միգուցե այս կամ այն իրավիճակում պարտություն կրելիս մենք ունենում ենք հիասթափություն, հուսահատություն, ընկճվածություն, տրտունջ, բայց պետք է հիշենք, որ Տիրոջ ցանկությունն է՝ մեզ դարձնել հաղթող յուրաքանչյուր իրավիճակում:

Պատկերացրե՛ք մի իրավիճակ, երբ բռնցքամարտի մարզիչը իր սանին մարզելուց հետո մրցամարտի է տանում: Մարզիկը մարտահարթակ է բարձրանում հաղթելու երազանքներով ու սպասումներով, սակայն հաղթելու փոխարեն պարտվում է: Չի բացառվում, որ դրանից հետո նա կարող է ընկճվել, հուսահատվել կամ հիասթափություն վերապրել: Նա կարող է մտածել. «Մի՞թե իմ մարզիչը չգիտեր, որ իմ և

հակառակորդի ուժերն անհամեմատելի էին, ինչո՞ւ նա գնաց այս քայլին: Մի՞թե ուզում էր ինձ խայտառակել: Միգուցե ինչ-որ հարցում ես նրա հանդեպ սխալ վերաբերմո՞ւնք եմ ունեցել...»: Եվ այսպես՝ վիրավորվելով ու հիասթափվելով՝ մարզիկը կարող է վերջ տալ իր մարզական կյանքին: Սա սխալ մոտեցում է: Ցավոք, շատ քրիստոնյաների կյանքում կարելի է տեսնել այս նույնը. երբ նրանք պարտություններ են կրում, վիրավորված, հուսահատված և հիասթափված որոշում են հանձնվել ու այլևս չշարունակել իրենց ճանապարհը: Իսկ ո՞րն է ճիշտ մոտեցումը նման իրավիճակում: Ե՛կ հիշենք աստվածաշնչյան հերոսներից մեկի՝ Յովսեփի կյանքը: Չնայած բոլոր անհաջողություններին՝ նա հասավ իր նպատակին, գնաց մինչև վերջ, չկանգնեց կես ճանապարհին, չհիասթափվեց, չբավարարվեց և չհանձնվեց:

Աստված մեզ համար պատրաստել է մեծ օրհնություններ, բայց երբեմն մենք դրանք բաց ենք թողնում, ինչպես Եսավը, որ մեկ աման թանապուրով վաճառեց իր անդրամիլիոնյան օրհնությունը:

Ե՛կ ուղղակի փնտրենք Աստծո երեսը: Նրա ներկայության մեջ կհասկանանք, թե որն է Նրա

կամքը մեզ համար: Այնքան կարևոր չէ, թե ինչ ենք մենք ուզում և խնդրում Աստծուց, որքան այն, թե ինչ է մեզ ասում Աստված:

Աշակերտները երանության մեջ էին, երբ Հիսուսը հրաշքեր և բժշկություններ էր անում, ինչպես օրինակ, հացի և ձկան բազմացումը, Ղազարոսի հարությունը: Նրանք ցանկանում էին, որ Հիսուսը միշտ լիներ իրենց կողքին, որովհետև իրենց կյանքը օրհնված էր (իհարկե նման առօրյաից ոչ ոք էլ չէր ցանկանա հրաժարվել): Սակայն Հիսուսը նրանց ասաց.

«...լավ է ձեզ համար, որ ես գնամ, որովհետև եթե չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մոտ, բայց եթե գնամ, Նրան կուղարկեն ձեզ մոտ: ...Բայց երբ որ ես՝ ճշմարտության Հոգին գա..., Իր անձից չի խոսի, այլ ինչ-որ կլսի, կխոսի և գալու բաները կպատմի ձեզ»:

*Հովհաննեսի 16.7,13*

Միգուցե այսօր մենք էլ Հիսուսի աշակերտների նման եկեղեցում գտել ենք մեր տեղը, ունենք բարեկեցություն և հարմարավետություն, օրհնված ենք, լսում ենք Աստծո խոսքը, տեսնում Տիրոջ հրաշքները, և վայելելով այս ամենը՝ չենք ուզում կորցնել: Բայց Հիսուսը մեզ առաջարկում է առաջ գնալ՝ թողնելով ներկան և անցյալը:

## ԳԼՈՒԽ 3

### Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո Երազանքներից ավելի

Մենք երբեմն ավելի շատ նվիրվում ենք մեր երազանքներին և մեծ խանդավառությամբ ու ինքնամոռացությամբ սկսում ենք գործել: Բայց եթե այդչափ նվիրվեինք Աստծուն և աշխատեինք կատարյալ նվիրվածության հասնելու համար, ավելի օրհնված կլինեինք, ինչպես որ գրված է Աստվածաշնչում. *«Սակայն առաջ Աստծո արքայությունը և Նրա արդարությունը խնդրեք, և այդ ամենը կտրվի ձեզ»* (Մատթ. 6.33):

«Ամեն մեկի գործը պիտի հայտնվի, որ օրը կերևացնի: Որովհետև կրակով պիտի հայտնվի, և ամեն մեկի գործը, թե ինչպես է, կրակը կփորձի: Եթե մեկի գործը, որ շինեց, հաստատ մնա, վարձք կառնի: Եվ եթե մեկի գործը այրվի՝ վնաս կքաշի, բայց ինքը կապրի...»:

*Ա Կորնթացիների 3 .13-15*

Յեղի քահանայի օրերուն Աստծո խոսքի առատություն չկար: Աստվածաշնչուն գրված է, որ Յեղիի օրերուն Տիրոջ տան կանթեղը գրեթե մարել էր, Աստծուց հայտնի խոսք և տեսիլք չկար: Յեղիի որդիներն էլ՝ Ոփնին և Փենեհեսը, թեև քահանաներ էին, բայց աստվածավախություն չունեին: Եվ Աստված Իր ծառային ուղարկում է Յեղիի մոտ՝ նրան հանդիմանելու: Նա Յեղիին ասում է. «Տերը այսպես է ասում... քո որդիներին Ինձանից ավելի ես պատվում... Ես Ինձ փառավորողներին կփառավորեմ, և Ինձ արհամարհողները կանարգվեն» (Ա Թագ. 2.27-30):

Երբ փղշտացիները հարձակվում են Իսրայելի վրա, իսրայելացիներից չորս հազար մարդ է ընկնում, և նրանք պարտվում են: Ժողովուրդն Իսրայելի ծերերի հետ միասին որոշում է պատերազմի դաշտ բերել Տիրոջ Ուխտի տապանակը՝ ասելով. «...Տիրոջ Ուխտի տապանակը Սելովից մեզ մոտ առնենք, և նա մեր մեջ գա և մեզ ազատի մեր թշնամիների ձեռքից» (Ա Թագ. 4.3): Եվ Տիրոջ Ուխտի տապանակը Յեղիի որդիներին՝ Ոփնիի և Փենեհեսի հետ բերում են բանակատեղի: Երբ Ուխտի տապանակն արդեն բանակի մեջ էր, ամբողջ Իսրայելը բարձր ձայնով սկսում է աղաղակել, և գետինը

դղրդում է: Փղշտացիներն այդ աղաղակի ձայնը լսելով՝ ասում են. «Այս ի՞նչ բարձրածայն աղաղակ է եբրայեցիների բանակում»: Եվ իմանալով, որ Տիրոջ Ուխտի տապանակը բանակում է, վախենում են և ասում. «Աստված եկել է բանակի մեջ: Վա՛յ մեզ, որովհետև մինչև հիմա այսպիսի բան չէր եղել: Վա՛յ մեզ, այս զորավոր Աստվածների ձեռքից ո՞վ պիտի ազատի մեզ. սրանք այն Աստվածներն են, որ Եգիպտոսին զարկեցին ամեն հարվածներով անապատի մեջ» (Ա Թագ. 4.7,8): Փղշտացիները ուժովանում են ու պատերազմում: Իսրայելը պարտվում է և մեծ կոտորած է լինում, Աստծո տապանակը գերի է վերցվում, իսկ Յեղիի որդիները՝ Ունիին ու Փենեհեսը, մեռնում են:

Աստծո տանը ծառայող լինելը մեզ որևէ արտոնություն չի տալիս՝ ապրելու ոչ սուրբ, անհոգ և աշխարհիկ կյանքով: Ավելին՝ դա մեզ պարտավորեցնում է ավելի զգուշորեն քայլել Տիրոջ ճանապարհներով:

Փղշտացիները Աստծո տապանակը տանում են Ազովտոս ու դնում տաճարում՝ Դագոնի տանը, նրա արձանն կուռքի մոտ: Յաջորդ օրը՝ առավոտյան, տեսնում են, թե ինչպես է Դագոնի կուռքը երեսնիվայր ընկել գետնին՝ Տիրոջ Ուխտի տապանակի առջև: Նրանք կուռքը

վերցնում են և դնում իր տեղը: Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, կրկին տեսնում են, որ Դագոնը Տիրոջ տապանակի առջև գետնին է ընկել, իսկ նրա գլուխն ու ձեռքերի թաթերը կոտրվել են: Աստվածաշունչն ասում է, որ Տիրոջ ձեռքը ծանրացավ ազովտացիների վրա և նրանց զարկեց թանչքի ուռուցքներով: Այսպիսով՝ Աստված Իր անվան փառքը պահեց՝ հաստատելով, որ Իր ձեռքն ու ներկայությունը Ուխտի տապանակի հետ են, սակայն եղան մարդիկ, ովքեր չօրհնվեցին տապանակի ներկայությունից, որովհետև ուխտի մեջ հավատարիմ չեղան Տիրոջը (տե՛ս Ա Թագ. 3-րդ և 4-րդ գլուխները): Մենք կարող ենք կարդալ, որ Տիրոջ Ուխտի տապանակը Աբինադաբի տանն էր, բայց Աբինադաբը ոչ միայն չօրհնվեց, այլ նաև նրա որդին մահացավ, իսկ երբ տապանակը տարվեց գեթացու տուն՝ գեթացին օրհնվեց:

«Երկնքի արքայությունը նմանվեց մի մարդի, որ իր արտուն բարի սերմ ցանեց: Եվ մարդիկ քնելիս, նրա թշնամին եկավ և ցորենի մեջ որոմներ ցանեց և գնաց: Եվ երբ որ խոտը աճեց և պտուղ տվեց, այն ժամանակ որոմներն էլ երևացին: Եվ

տանտիրոջ ծառաները մոտ գալով՝ ասացին նրան՝ Տե՛ր, մի՞թե դու քո արտուն բարի սերմ չսերմեցիր, ապա ի՞նչ տեղից են որոմները: Նա էլ ասաց նրանց՝ թշնամի մարդ է արել այդ»:

*Մատթեոս 13.24-28*

Այո՛, մեր կյանքում երկուսն էլ աճում են՝ թե՛ երկնայինն ու հոգևորը, թե՛ մարմնավորն ու շնչավորը՝ ծուլությունը, մեղքը, հիվանդությունը... Ե՛կ արթուն մնանք և սատանային տեղ չտանք մեր կյանքում: Աստծո հետ մեր ունեցած փոխհարաբերության և շփման արդյունքում մենք կլցվենք Սուրբ Հոգու օծությամբ, որը կազատի մեզ կապանքներից և գերությունից:

«Դու սիրում ես արդարությունը և ասում ես անօրենությունը. սրա համար... օժեց քեզ քո Աստվածը ուրախության յուզով ավելի, քան քո ընկերներին»:

*Մաղնոս 45.7*

«Եվ այն օրը կլինի, որ նրա բեռը վեր կառնվի քո ուսից և նրա լուծը՝ քո պարանոցի վրայից, և լուծը պիտի կոտրվի ճարպի պատճառով»:

*Եսայի 10.27*

«Երբ Տերը Սիոնի գերությունը դարձնի, երազ տեսնողների պես կլինենք: Այն ժամանակ մեր բերանը կլցվի ծիծաղով, և մեր լեզուն ցնծությունով. այն ժամանակ կասեն հեթանոսների մեջ՝ Տերը մեծ բաներ արեց նրանց համար: Տերը մեծ բաներ արեց մեզ համար, և մենք ուրախացանք»:

*Սաղմոս 126.1-3*

Երբ Տերը Իր ժողովրդին դուրս բերի գերությունից, այսինքն՝ մեղքից և մարմնավոր ապրելակերպից, նրանց կյանքն առատապես կլցվի Աստծո օրհնություններով և հրաշքներով: Եվ նույնիսկ հեթանոսները կասեն. «Տերը մեծ բաներ արեց...»:

«Եվ դուք ետ կդառնաք և կտեսնեք արդարի ու ամբարշտի տարբերությունը. Աստծուն ծառայություն անողի և ծառայություն չանողի տարբերությունը»:

*Սաղաքիա 3.18*

Մենք ունենք աշխատասիրության կարիք: Գրված է.

«Փայտ չլինելիս կրակը կհանգչի...»:

*Առակաց 26.20*

Ամեն աշխատության մեջ կա արդյունք: Մեր աշխատասիրությանը մենք կարող ենք մնալ Սուրբ Հոգու լեցունության մեջ, ավելի ու ավելի լցվել Սուրբ Հոգու կրակով և զորությամբ, իսկ ծուլության պատճառով կարող ենք այդ ամենը կորցնել:

«Ծուլի հոգին փափագում է և չունի, բայց աշխատասերների հոգին կպարարտանա»:

*Առակաց 13.4*

«Մի մարդ իր այգու մեջ մի թզենի էր տնկել, և եկավ նրա վրա պտուղ որոնելու և չգտավ: Եվ այգեպանին ասաց «Ահա երեք տարի է, որ գալիս եմ պտուղ որոնելու այդ թզենու վրա և չեմ գտնում, կտրի՞ր դրան, ինչո՞ւ դա երկիրն էլ խափանի»: Նա էլ պատասխանեց և ասաց՝ Տեր, այս տարի էլ թող դրան, մինչև որ դրա չորս կողմով փորեն և աղբ լցնեն: Թերևս պտուղ բերի, ապա թե ոչ, եկող տարի կտրի՞ր դրան»»:

*Ղուկաս 13.6-9*

## ԳԼՈՒԽ 4

# Աստված ունի Իր երազանքները քո համար

### *Հավատարիմ քահանա*

«Ո՞վ ունեն ես երկնքում, և Քեզանից բացի  
բան չեմ ուզում երկրի վրա»:

*Սաղմոս 73 .25*

Ղևտացու և քահանայի բաժինը Տերն է: Ցավոք, երբեմն մենք՝ հոգևոր ավագներս, ղևտացի ու քահանա լինելով՝ չենք մնում մեր կոչման և ծառայության բարձրության մեջ:

«Եվ Ինձ համար մեկ հավատարիմ քահանա պիտի հանեն, որ բոլոր Իմ սրտի և հոգու միջի եղածը կատարի, և նրա համար հավատարիմ տուն կշինեն, և նա միշտ Իմ Օծյալի առաջ կգնա»:

*Ա Թագավորաց 2.35*

«Սրանից հետո կդառնամ և Դավթի վայր ընկած բնակարանը (խորանը) կշինեն և նրա քանդվածները նոր կշինեն և կկանգնեցնեն նրան, որ մարդկանց մնացածները Տիրոջը խնդրեն, և այն բոլոր հեթանոսները, որոնց վրա Իմ անունը կանչված է,— ասում է Տերը՝ Նա, որ այս բոլորն անում է»:

*Գործք 15.16,17,  
(տե՛ս նաև Ամովս 9.11)*

Աստված ուզում է մեր կյանքում վերականգնել ընկած խորանը՝ այսինքն՝ մեր աղոթքի, փառաբանության և երկրպագության կյանքը, Աստծո հետ մեր անձնական շփումն ու փոխհարաբերությունը, ինչպես գրված է. «...նրա քանդված տեղերը նոր կշինեն և կկանգնեցնեն նրան...»: Եվ երբ կվերականգնվի ընկած խորանը, կտեսնենք արդյունք. Աստծո հետ մեր ունեցած շփման, աղոթքի, փառաբանության, երկրպագության արդյունքում հեթանոսները դարձի կգան: Գրված է. «...կկանգնեցնեն նրան, որպեսզի մնացած մարդիկ Տիրոջը խնդրեն, և այն բոլոր հեթանոսները, որոնց վրա Իմ անունը կանչված է»: Թուլացած, տկարացած հավատացյալնե-

րը, «հանգած հրաբուխները» կվերականգնվեն, եթե մեր կյանքում վերականգնվի ընկած խորանը: Ե՛կ այսօր փնտրենք Աստծո երեսը, թույլ տանք, որ Տերը վերականգնի ընկած խորանը:

«Ով Աստված, Դու ես իմ Աստվածը. առավտանց Քեզ եմ ման գալիս. հոգիս ծարավ է Քեզ համար, մարմինս Քեզ է ցանկանում ցամաք և ծարավ երկրում, ուր որ ջուր չկա: Այնպես սրբության տեղում նայեցի Քեզ, որ Քո զորությունն ու փառքը տեսնեմ»:

*Սաղմոս 63.1,2*

«Թեև թզենին չծաղկի, և որթերի վրա բերք չլինի, ձիթենու արդյունքը ստի, և արտերը կերակուր չտան, կտրվի ոչխարը փարախից, և արջառ չլինի գոմերում, սակայն ես Տիրոջով պիտի ցնծամ, պիտի իմ փրկության Աստծով ուրախանամ: Տեր Եհովան իմ զորությունն է և իմ ոտքերը եղնիկների նման է անում և ինձ իմ բարձր տեղերի վրա է ման ածում»:

*Ամբակում 3.17-19*

Խոսելով թզենու և որթերի բերքի, ձիթենու արդյունքի, արտերի, ոչխարների և արջառների

րի մասին՝ Ամբակում մարգարեն նկատի ունի այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդուն ապրելու համար: Սակայն, նա ասում է, որ եթե այդ ամենը չլինի, միևնույն է, նա Տիրոջով պիտի ցնծա և իր փրկության Աստծով ուրախանա: Մենք մեր կյանքում հոգևորը պետք է ավելի կարևորենք աշխարհիկից, որովհետև Աստծո խոսքն ասում է. «...առաջ Աստծո արքայությունը խնդրե՛ք, և այդ ամենը կտրվի ձեզ», «...հոգս մի՛ արեք ասելով, թե ինչ պիտի ուտենք, կամ ինչ պիտի խմենք, կամ ինչ պիտի հագնենք»: Այստեղ խոսքը ոչ թե անհոգության, այլ Աստծուն վստահելու մասին է. մեր ապրելակերպը, մտածմունքներն ու երազանքները հոգևո՞ր են, թե՞ մարմնավոր: Երբ մեր կյանքում առաջնահերթությունը տալիս ենք հոգևորին, դա ունենում է իր արդյունքը: Ամբակումն ասում է. «Տեր Եհովան իմ զորությունն է և իմ ոտքերը եղնիկների նման է անում...»: Այլ խոսքերով ասած՝ Տերը տալիս է զորություն և ընդունակություն՝ քայլելու դեպի տեսիլքը և դա իրագործելու: Յուրաքանչյուրս ունենք «բարձր տեղեր»՝ նպատակներ, որոնց ձգտում ենք հասնել: Ամբակումն ասում է. «...ինձ իմ բարձր տեղերի վրա է ման ածում» (Ամբակում 3.19): Մեկ ուրիշ հատվածում Դա-

վիթն ասում է. «Տե՛ր, ինձ առաջնորդի՛ր ինձանից բարձր եղող վե՛նը»:

«Խնդրե՛ք Տիրոջից անձրև ետքի անձրևի ժամանակին. Տերը կայծակներ է շինում, և անձրև ու տարափ կտա նրանց...»:

*Ջաբարիա 10.1*

Մենք պետք է արթնանանք, կանգնենք և խնդրենք արթնության անձրև, լինենք պտղաբեր, ոչ թե ապրենք հիասթափված ու ընկճված կյանքով:

«Երանի այն ժողովրդին, որ գիտի փողերի ձայնը: Ով Տեր, նրանք Քո երեսի լույսով կզնան»:

*Սաղմոս 89.15*

Ե՛կ պարզապես լինենք ավելի զգոն, որպեսզի լսենք և ճանաչենք Տիրոջ ձայնը, որը հնչում է Երկնքից, չանարգենք, այլ հնազանդվելով՝ առաջ գնանք:

«...Այն քարը, որ շինողներն անարգեցին, ևա եղավ անկյունի գլուխ...»:

*Մատթեոս 21.42*

Մեր կյանքը պետք է կառուցված լինի Աստծո  
խոսքի հիման վրա: Մենք պետք է լսենք և կա-  
տարենք Աստծո խոսքը: Գրված է. «...*լայն բաց  
արա քո բերանը, և ես կլցնեմ*» (Սաղմ. 81.11):

Աստված սիրում է քեզ և ցանկանում է քեզ  
նորից տեսնել ուժեղ, հաղթող և լցված Սուրբ  
Հոգով:

**sarkisyan@wolarm.org**



